յանի դատը ամուսինը, առանց ակնարկի կամ հիշատակության մի յերկրորդ Եաչիի մասին *. Գրիգոր Անավարզեցու դեմ գումարված ժողովի ձեռնարկի տակ Պապաքի և Եաչոյի ստորագրությունը վորպես «որդիք բարեպաշտ իշխանին Պռոշայ» մեզ չպետք է շփոթեցնե. վորովհետև այդտեղ «որդիք» բառը ընդհանուր իմաստով և գործածված. հենց Պռոշյան տոհմի հետագայ սերնդի համար հիշատակարանների մեջ հաճախ գործածված է «Թոռն» կամ «Թոռունք» խոսքը, թեև նոքա Պռոշի բուն թոռները չեն. բառի այդպիսի ընդհանուր գործածություն պատահում է Որբելյանի մեջ նաև ուրիշ դեպքերում։

Յերբ է ծնվել Եաչին, կարող ենք մոտավոր ճշդությամբ վորոշել. 1268 թ. Գեղարդի պահարանի արձանագրության մեջ դեռևս հիշատակություն չկա նորա մասին. հնագույն հիշատակությունը գտնվում է Թանատի վանքի շինության արձանագրության մեջ, վոր թեև թվական չունի, բայց գիտենք, վոր 1273 թ. պետք է գրված լինի, այսինքն վանքի շինության ժամանակ. այսպիսով Եաչիի ծնունդը կարող ենք նշանակել 1268—1273 թ. թ. մեջ. այստեղ նա հիշված է «մանուկ» մականվամբ, ինչպես և Զալալյանի մեջ բերած Արկազու Ս. Խաչի թերի արձանագրության մեջ, վորովհետև իրոք փոքրահասակ կամ նորածին մանուկ եր նա դեռ ևս. բայց այդպես վաղ հիշատակվել է սկսում այն պատճառով, վոր իշխող տան միակ ժառանգն եր։ Զալալյանի հիշած (Բ. 134) Արկազու Ս. Խաչի արձանագրությունը՝ «և ամենավեհ իշխանի Պռոշոյ եկեղեցիս և մանկան Էաչոյ և մեծահաւատ տիկնոջ Խոտանայ, յորժամ տէր էր տեղւոջս»՝ տարաբաղդաբար գտնել և ստուգել չկարողացանք. բայց ինչպես էլ լինի, սխալ է նորա յեղրակացությունը, վորպես թե Պռոշի կինն է տիկին Խոտանը. մեզ հայտնի յե Գեղարդի պահարանի արձանագրությունից, վոր Պռոշի կնոջ անունը Խութլու Խաթուն եր և վախճանված արդեն 1268 թվից առաջ (եջ 104/5). վոչ մի հիմք չունինք յենթադրելու, վոր նա ամուսնացած եր յերկրորդ անգամ ծերության հասակում և կամ այս յերկրորդ ամուսնությունից եր հիշված մանուկ Եաչին, ապա թե վոչ վորդու հետ հիշատակված կլիներ և մայրը արձանագրությունների մեջ. այլ հավանականն այն է, վոր Արկազու Ս. Խաչն էլ Պռոշի տիրապետության տակ եր, իսկ Խոտանա կամ Խոտան տիկինը նորա ստորադրյալ ազատների մեկի կինը, վոր յուր շինության արձանագրության մեջ պարտք է համարել հիշել յուր պատրոնի ու նորա ժառանգի անունը (եջ 43)։ Ալիշան ևս իրավամբ մերժում է Պռոշի այդպիսի կին ունենալու իրողությունը **։

Եաչիի անվան լոկ հիշատակություններ տեսանք 1286 թ. Մարտիրոս գյուղի վիմափոր յեկեղեցու արձանագրության մեջ, Թաճերի Նարեկի հիշատակարանների մեջ և ապա Թանահոտի վանքի Խութլու բեկի արձանագրության մեջ, գրված Պռոշ իշխանի մահից՝ 1284 թվից հետո (եջ. 142). փոքր ինչ ավելի մանրամասն

Եաչիի արձ. Սպիտակավոր Աստվածածնում. Պատկեր 80.

* Օրբելեան. 432. 475. 473, 485. 488։
** Սիսական 119։